ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«____»_____202 թ.

№ _____

«Արմտեքստիլ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00498117)
ՀՀք.Երևան, Արցախ թ, տ 56
Հեռ. +37498999908, 010444334
էլ. փոստի հասցե՝ armtextile77@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմտեքստիլ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 12.02.2024թ. կնքված N ՓՊՄԱՊՁԲ-24-7/16-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում (Համաձայնագիր N1, առ 10.05.2024թ.) Ընկերությունը Համաձայնագրի կնքումից հետո 150 օրացուցային օրվա ընթացքում պետք է մատակարարեր 200 լրակազմ Վրան 2-3 տեղանոց :

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին 23.09.2024թ. ներկայացրած գրության համաձայն Ընկերությունը հրաժարվում է կնքված պայմանագրի շրջանակներում 200 լրակազմ Վրան 2-3 տեղանոց ապրանքատեսակի մատակարարումից:

Հիմք ընդունելով վերոգրյալը ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հոկտեմբերի 17-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Արմտեքստիլ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 47040 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 480000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 720000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2024թ. հոկտեմբերի 25-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **480000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **720000** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Արմտեքստիլ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2024թ. հոկտեմբերի 25-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ